


ԲԱՏՆԵԳԻՆ

Ի Պուլհարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏՍԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՓԵՏՐ. 24 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 201

→(ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆ)←

ՊԻՏԻ ԱՊՐԻ

Հայելի՛ իր աս թուով, հինգերորդ տարին
կը թեւակոխէ, որչափ ծանօթ է մեզ, ժողովրդ-
դական գնահատելի քաջալերութեան և գործնա-
կան համակրանքի մը թանկագին օժանդակու-
թեանը կը թնամ:

Անոնք՝ որ չար գուշակներու պէս նենգամտօ-
րէն, Հայելին՝ ծնած օրէն իսկ, մեռնելու դատա-
պարտուած մը ցոյց տալ կ'ուզէին, անոնք են մա-
նաւանդ այսօր, որ ի հարկէ անբացատրելի շու-
արումով մը կը տեսնեն անոր յաջող ընթացքը
ու վեց ամիսէ ի վեր աւելի մեծ ծաւալով գալ
հասնիլը իր հինգերորդ տարեշրջին անսայ-
թաք ու անընդհատօրէն հրատարակուած:

Սակայն բարեկամ թէ թշնամի, պէտք չէ շուա-
րին աս երևոյթին հանդէպ, որուն շարժառիթը
ընդհակառակը պէտք է փնտռեն նոյն իսկ Հայե-
լին մէջ, որ ծնած օրէն ի վեր գիտցաւ իր կո-
չումին արժանի կորովով մը պաշտպանել իր քեզը,
երբէք չը խոտորի իր ճամբէն ու հետեւաբար
անժխտելիօրէն ստանալ գոյութեան իրաւունքը
իր միջավայրին մէջ:

Գաղթականութեան տաք ու խառնիճաղանջ հո-
սանքին ատեն, ուր շլմորած Հայ ժողովուրդը
կուգար՝ առաջին անգամը ըլլալով, արտասահմա-
նի ազատ օդը շնչել և հետեւաբար կը ներէր ինք-
զինքին ամեն զբօսանք և ժամանց, Հայելի՛ Օղիկ
ու թագուշ տուտունները ստեղծեց ու խարազա-
զանեց՝ նոյն իսկ անոնց հասկցած լեզուով, փո-
ղոցային անհատնում սիրաբանութիւնները, որ

սկսած էին ալ աղտը ըլլալ Հայ հաւարակութեան
ճակատին:

Ուր որ մտան իր Բոժոժիկները, սկսած բարձ-
րագոյն սալօններէն մինչև ամենայն խրճի-
թը, ու ընտանեկան աղտոտ բարքի մը նմայշը բե-
րին հասուցին Հայելին, զարկաւ առանց անուն
տալու, և, զարնուողին ճվառուքը լսուեցաւ հրա-
պարակի վրայ ինքնամատնութեան ապուշ թա-
փով մը: Ու հոգ էր արդէն Հայելիի զաւեշտնե-
րուն յոյր ուժն ու նրբութիւնը. հարուածել ա-
ռանց մատնանշելու, բայց միեւնոյն ատեն ճանշ-
ցունել աշխարհ արարատի իր խարաղանին ողոր-
մելի զոհ:

Ո՛վ չը յիշեր հռչակաւոր «Տայան Ղարապիթ
աղան» որ այնքան հալածուեցաւ Հայելիէն, ան-
խնայ, մինչև որ Զրուանեան պաղ-շտութեան
մոլեռանդ խնկարկուները՝ իրենց տիպար Ղարա-
պիթ աղայով մեկտեղ անհետացան հրապարակէն
ու օտարին առջև առիթ չունեցան ծայրայեղօ-
րէն բժաւորելու Հայուն աւանդական պարկեշ-
տութիւնը:

Ո՛վ չը յիշեր Ծննդոց ծերուկը և ասոր հովե-
րուն հետեւող Անթոնիօ Ատամչունին, որոնք իրենց
յիսունէն վաթսուն ձմեռներովը սկսած էին Հայ
տղքատ կնիկներու դարպասամատոյց ըլլալու
յաւակնութիւնը սնուցանել ու անոնց ընտանե-
կան դժբաղդ, բայց, խաղաղ յարկը վրդովել ի-
րենց ձիւնսպիտակ մօրուքներովը: Զամչցածներ,
որոց տժգոյն դէմքը իր ատենին նկարելու պա-
տեհութիւնը չը կորսնցուց Հայելի, նորոյթի մը
բաւոր ծիծաղելի երանգներովը:

Ո՛վ չը յիշեր, Բէրսիաէ տուտույով մեր տարա-
գրուած ժողովուրդին մէջ կրօնական պառակ-
տումներ յառաջ բերելու նկրտող մարդորսներու
դէմ մղած պայքարը, որուն իբր անմիջական ար-

գիւնք, ոյս տողերը արձանագրողն իր իսկ աչքովը տեսած է չաբաթապահ քարոզիչ կնոջ մը խուճապագին փախուստը այն տուներէն, ուր ըսկած էր երթեկեկ երկար ատենէ ի վեր ու չաբաթին գերազանց սրբութիւնը քարոզել իր մատաղատի աղջկանը հետ մէկտեղ:

Ո՛վ չը յիշեր զԵՎԳԵԼՈՒԹԵԱՆ դարավերջիկ ներկայացուցիչներէն՝ Հաւկիթ Դեղնուցեանը, որ ըսկած էր Վառնայի իր երկրէն է՛ն կապելային ձեւերովը, խօսքերովն ու նիւտ ու կացովը գէշ օրինակ հանդիսանալ Հայ երիտասարդութեան և հետեւաբար անոր բարոյականը խաթարելու նըկրտիլ ծայրագոյն լրբութեամբ: Հայելիին է՛ն գեղեցիկ ներշնչումներէն մէկը ըլլալու պայմանաւ, Հաւկիթ Դեղնուցեանի միմիք պատկերը՝ օգաչու և երկնաձիգ պեխերու գերազանցապէս ծիծաղելի շուքին տակ, «Հաւկիթ գուրունուղ քէնտիմ» մառչով մըն ալ քնարերգուած բաւ եղաւ հալածական վտարել զանի և անոր փախուստին հետ միաժամանակ տեղն ի տեղը սպաննել նաև կոտորուանքի, նազ ու նազանքի, չպարի ու պըճրանաց արտառոց ու փնասաբեր այդ Հաւկիթ գեղնուցեան նորոյթը:

Ո՛վ չը յիշեր Դամոկլեան սուրը՝ զոր Բոժոժիկ առ կախ կը պահէր միշտ մեր կղերականներու գլխուն, որոնք՝ աւաղ, մեծ մասամբ Եւգոկեան պղինձներու կարծրութիւնը կը գերազանցեն՝ իրենց պարագութեան հաւասար, տգիտութեան և, իրենց տափակութեան հաւասար, անզգայութեան կողմանէ: Այդ Դամոկլեան սուրին արժէքը՝ ով որ չեզոքացնել կ'ուզէ միամիտ երկբայանքով մը, կարող է Աստանդաշղիկէն և Հիւրմիւզեանէն ուսնիլ անոր հարեոածին ծանրութիւնը ու սեւապատ կուրծքի մը ախ ու վախերուն է՛ն ծիծաղելի ու է՛ն զաւեշտական խաղերը անոնցմէ ունկնդրել հեշտագիտօրէն:

Ո՛վ չը յիշեր տըթ. Փառթֆուռթը, որ սկսած էր տիտղոսամոլութեան դպրոց մը ստեղծել հեղինակօրէն ու ինք՝ իր ստորագրութեան չը խընայել սուտիկէ տօթթօռութեան բոլոր ծիծաղելի պերճանքը: Տիտղոսի անհարկի ու շռայլ իրաւ մըն էր ասիկա, զոր միայն մէկ քանի տիկիներ միամտօրէն ու մէկ քանի փողհարներ որկրամոլօրէն ըմբոշանցին: Ու Հայելի՝ միացած իր ոչ նուազ մէկ կտրիճ ֆօնժոնէին, գետին թափեց այդ իրաւը քաջաբար ու հարկադրեց զինքը որ իր ձեռքով սրբէ անոր պլշտութեանը: Ու քէնը՝ զոր պահեց սուտիկէ տօթթօռը խորունկ կերպով, իր փորը մնաց իր սիրեցեալ թիթիին հետ մէկտեղ:

Վերապէս ո՛վ չը յիշեր «Մեղան, Հաւատամքը, Զեւնադրութիւնը ու Խաչագողական մարչը, ուր Հայելի ստորագրեց իր զաւեշտներուն է՛ն գեղեցիկ կտորները ամենաչքեղ գծերով և ուր այն-

քան նկարագրող պատկերեց Քառուրի ճագուկներուն վիճակը՝ իրենց ամենէն պժգալի մերկութեանը մէջ: Հայ գաղութներուն ամեն մէկ կէտին վրայ քանի մը տառնեակներով վխտացող խաչագողերու վոհմակը և կամ ուրիշ կերպ խօսելով, աղբային տան այդ աւերիչ ու անպատկառ սրիկաները մէկ ծայրէն միւսը բնականօրէն զգացին ամօթի սարսուռը Հայելիի ցուրտ սուշովը և ի գոհ «Դա Բաբակալլօ է» խօսքով մխիթարական կայծ մը ցուցնել ուղեցին իրենց հոգիի մութ ու սև ալքերուն մէջ... Ու խարանը հետզհետէ շեշտուեցաւ իրենց ճակատին վրայ ու անոնցմէ չատերուն երթն ու դարձը «խաչագողը գացեր է, խաչագողը եկեր է» պարզ ու որոշիչ բանաձևերով հռչակուեցաւ ամեն շրջանակի մէջ ալ: Թող երթան, թող գան. Հայելիի Մեղան, Հայելիի Հաւատամքը, Հայելիի խաչագողական մառչը իրենց հետն է միշտ, իրենց փառքն ու պսակը շքեղօրէն բուրուած իրենց ճակատին վրայ:

Եւ քանի որ այսպէս Հայելի կը շարունակէ՝ ամեն ստոր նկատումներէ վեր, տէրն ըլլալ իր գերին ու ամեն խաւի մէջ զգալի ընել իր մտրակին շփումը, խորապէս համոզուած ենք թէ անիկա պիտի ապրի երկար ժամանակ, ու կարեւոր պէտք մը պիտի լրացունէ արտասահմանի Հայ գաղութին մէջ:

ԹՕՏԻՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Վառնայի երկսեռ Որբախնամ ընկերութեան Գործ. Ժողովս կուգայ հրապարակաւ իր խորին շնորհակալիքը յայտնել Խալիմայի աղնիւ աղբայնոց և նա մանաւանդ նորընծայ Արժ. Տ. Վաղինակ քահանայ Մինասեանի, որ բարեհաճած է անտէր որբերու անուան 80 Քրանքի գումար մը հաւաքել ու մեղ շրկել:

Ինչպէս կերեւի Արժ. Տ. Հայրը իր նոր ընտրած ասպարէզին մէջ օգտակար դառնալու մտօք ամենառարկական պարտք նկատած է որբերու նուիրական գործով զբաղիլ:

Մեզ փափաքելի է յուսալ որ Պուլկարիոյ զանազան կողմերու հովիւներ ևս ի նկատի ունենալով վերոյիշեալ կղերականին օրինակելի ընթացքը, պիտի փութան կատարել իրենց պարտականութիւններ հանդէպ անտէրունջ որբին:

Վառնա, 20 փետր. 1901



Տեղւոյ անձկութեան պատճառաւ նուիրատուներուն ցանկը չը կրցինք հրատարակել:

Ծ. Խ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—2026—

ԵՐԿՈՒՔԷՆ ՄԷԿԸ

22 փետր. 1901

... Խմբագիր

Տօրթ. Վարդանեանի պատասխանատուութեանը տակ հրատարակող տեղական թերթին Պոլսոյ թղթակիցը կըսէ թէ երեք շաբաթէ ի վեր բանտարկուած էի ու շնորհիւ ոսկիներուն ազատեցայ: Յետ այնորիկ կսկսի իր սովորութեանը համեմատ շարք մը հայհոյանքներ ուղղել Համիտին, Մահմետական կրօնքին ու թուրք կառավարութեան հասցէին:

Հաւատա՞նք թէ այդպիսի թղթակից մը գոյութիւն կրնայ ունենալ, որ բանտարկուի, բանտէն ելնէ ու Պոլիս նստած նորէն հայհոյէ հրապարակաւ և ասով ինքզինքը մատնէ թուրք կառավարութեան թէ վերջին երեք շաբաթուան քանակուած անձն է ինք, որ սարսիներէ ի վեր կերելայ աշդ թերթին մէջ միեւնոյն կեղծ ստորագրութեամբ:

Մենք ասանկ մէկու մը գոյութեանը չենք կրնար հաւատալ և աւելի հաւանական կը գտնենք, որ այդ թղթակցութիւնները հոս խմբագրուած են, այս անգամ, բողոքովին անձարակ կերպով. այս պարագային ալ թերթին վարիչները չը մտածեցին արդեօք թէ մահու չափ վտանգած կըլլան ամեն այն Պոլսեան հայերը, որոնք վերջին երգ շաբաթուան մէջ քանակուած ու ազատուած կրնան ըլլալ զուգահիշօրէն:

Արդ, կամ իրաւ է որ Պոլսէն կը գրուի կոր այդ թղթակցութիւնները ու այս պարագային մէջ պարսպ սեղը ինքզինքն էր իրմով ի հարկէ շատ մը ուրիշներ ալ վստահող յիշար մըն է ան և կամ հոս կը գրուի կոր և այս պարագային մէջ ալ, այս երեք շաբաթուան մէջ Պոլիս քանակուող եւ ազատող բոլոր խեղճերը վստահեցաւ անհետաւանութիւնը ունեցող մարդոց հետ է գործերնիս:

ԵՐԿՈՒՔԷՆ ՄԷԿԸ

ԿՈՐԻԻՆ

ՏԵՐԱԳՐ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Մարիճա գետ

Շնորհունակ Տ. Քօնեաք՝ Վիէօ քօնեաքը նետելով շատ անգամ ինքզինքը գծէն դուրս կը

նետէ կոր. վերջին անգամ տնկած այդ հեղուկին զօռէն անաճօռի բռնուելով, ինքզինքը եռվանչօ Բ. . . ի տունը գտաւ:

Մանրամասնութիւնք թղթատարաւ:

Ուլիցա Սօփիցա

Տեառնդառտլի առջի օրն ալ տեղւոյս շընորհունակ տէրպապին խուցէն չամաշըրճունի մը առօք փառօք դուրս հանուեցաւ, ինչպէս տէրպապին ալ քաղաքէս դէպի Մարիճայ գետ հրաշափառապէս ճամբայ հանուեցաւ, ժանտարմաներու պատշաճութեան ընկերակցութեամբ:

Բոժ.—Երկու տէր պապաներուն ալ երեսներին ճերմակ մնայ. . . ածուխի պէս:

Տոպրիչ

Մեր տէրպապին ձեռքով պսակուելէն ետքը բողոքական պատուելիէն ալ խաթմէրի պըսակ եղող ազգայինը՝ ժողովարանին մէջ ծունկ չոքած՝ ու ձեռքերը ականջին տարած՝ հետեւալ մեղան ըսաւ:

«Եօպէ՛, ալֆ էտին, պիր գուսուր տըր իշէտիմ, Գրիգորեան քիլիսէսինէ կիթտիմ, ալֆ էտին, թէօպէ, պին տէֆա թէօպէ՛»:

Պատուելին ալ ամենաողորմածաբար— Ալֆ էթտիմ, ալֆ էթտիմ, րահաթընա պա՛գ. ըսաւ:

Բոժ.— Ընդունելի արասցէ՛:

Մարիճա գետ

Մեր թաղ. խորհրդոյ անդամներէն մին բանկալի դրամէն 5 ֆրանքը անուշադրութեամբ (?) գրպանը մոռցաւ:

Քամչաթքա

Յըսֆսուկենց սեղանաւոր Մելիքոն աղան, քէօչէի աղքատ խահուէճիին մեծ բարերարութիւն (?) մը ըրած ըլլալու համար անոր 5 զրուշ փոխ տուաւ երկու շաբաթ պայմանաւաճով և օրական 10 փարա տոկոսով (այսինքն գաւաթ մը սուրճ). որով խահուէճին սուած 5ին տեղ 8 զրուշ 30 փր. պիտի վճարէ, Մելիքոն աղանիս ալ հանգարտ խղճով մատը անցուցած ոսկի մասնիներուն վըրայ գալ տարի հատ մըն ալ պիտի աւելցնէ:

Բոժ.— Միաբերան ասացուք, Աստուած ասանկ քարեւարներուն ինսաֆ ու մէրհամէթ պարգեւեսցէ:

ՁեկՈՅՑ — Յ. Պ. Ն. ֆիլիպէ, Ձեր գրութիւնը պիտի հրատարակուի ի կարգին:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳԻՐԻՆ ԴԱՏԸ

Ուսթր 30 Յունվ.

«Մանուկ Տամպուրաճեան, Աստուր Յակոբեան և Ղազար Տիրանեան երիտասարդները ձերբակալուած էին իբր կիրակի օրը գումարուած ժողովին խառնակիչներ և Պ. Վառմեանի վրայ յարձակուլներ, և որոնք երաշխաւորութեամբ արձակուած էին՝ երեքշաբթի օրը դատարան ներկայանալու պայմանաւ:

Որոշեալ օրը Ուսթրի դատարանը լեցուեցան բաղմամբիւ Հայեր ընդ որս և օտարականներ: Դատավարութիւնը սկսաւ ու ամենէն առաջ կիրակի օրուան ժողովին նախագահը՝ Պ. Պօլիկեան հարցաքննուեցաւ:

Դատաւորը—Անունդ ի՞նչ է:

—Պօլիկեան:

—Պատմէ եղածը:

—Կիրակի օրը եկեղեցւոյ սրահը յեղափոխական ժողով մը գումարուած էր, ես այդ ժողովին ատենապետն եմ, այս երեք պարոնները ժողովը խանգարեցին և ժողովէն վերջն ալ մեր ատենախօսէն՝ որ թերթի մը խմբագիրն է՝ բացատրութիւն պահանջեցին Հայոց Կաթողիկոսը քննադատած ըլլալուն համար: Հակառակ անոր պատասխանին թէ յոգնած եմ, ժամանակ չկայ, այս պարոնները ապտակեցին զինք և թերթը բերանը կոխելով կը պոռային «անշուշտ պիտի կլլես»:

(Դատաւորը կը ծիծաղի)—Դու հո՞ն էիր:

—Այո, և շանացի որ ազատեմ:

—Կարողացա՞ր ազատել:

—Ոչ, փախայ որ զիս ալ չծածեն:

—Ո՞վ է այդ մարդը և ինչո՞վ կղբաղի:

—Հայոց մէջ յեղափոխութիւն կը քարոզէ եւ Հայրենիք թերթին ալ խմբագիրն է:

—Լաւ, աեղդ նստէ:

Երկրորդ վկան էր Յովհաննէս Առաքելեան որ շատ քիչ տարբերութեամբ առաջինին ըսածները կրկնեց:

Ամբաստանեալներու փաստաբանը սկսաւ հարցաքննել Պ. Վառմեանը:

Փաստաբան—Անդիներէն գիտե՞ս:

Վառմեան—Ո՛չ, Գաղիներէն գիտեմ:

—Ըսել է քու դատող Գաղիա պիտի զրկուի (ընդհանուր ծիծաղ): Ասոր թարգման մը բերէք (թարգմանը կը ներկայանայ):

—Անունդ ի՞նչ է:

—Վառմեան:

—Ո՛ր կը կենաս և ինչո՞վ կղբաղիս:

—Ես խմբագիր եմ և լէքչըրըր անցեալ կիրակի Պօլիկեան հրաւիրուեցայ հոս տեղ խօսելու: Ժողովէն վերջ այս երեք պարոնները հասան

վրաս, զարկին ինձ, դետին ինկայ և կրկին վեր բարձրացնելով թուղթը բերանս կը կոխէին ըսելով «կամ պիտի բացատրես, կամ պիտի կլլես»: ամեն կողմերէ նստարաններով վրաս կը հասնէին սպաննելու սպառնալիքով:

—Ինչո՞ւ չբացատրեցիր:

—Ժամանակ չկար:

—Որչափ մարդ կար սրահը:

—200ի մօտ:

—Այդչափ բաղմամբեան մէջ ինչպէ՞ս գիտցար որ այս երեքն են:

—Միթէ ես աչք չունիմ:

—Դու ըսիր որ աչքիս զարկին:

(Վառմեան կը շուարի)—Ո՞վ էր քեզի պարնոշը, կը ճանչնաս:

(Երեք երիտասարդներէն մին ցոյց տալով)

—Աս էր:

—Ո՞ր տեղիդ զարկաւ:

—(Աջ երեսը ցոյց տալով) Սա տեղիս:

—Բայց տեղը յայտնի չէ:

—Բայց ամբողջ գիշերը կը ցաւէր աչքս:

—Ալ ուրիշ ի՞նչ պատահեցաւ:

—Սա երիտասարդն ալ խմբագրած թերթս ձեռքը բռնած կը զարնէր և կըսէր «կուլ տուր գրած յօդուածդ»:

—Դուն ինչ ըսիր:

—Ժամանակ չկայ բացատրութիւն տալու ըսի:

—Ի՞նչ յօդուած էր գրածդ:

—Մեր ամենամեծ կղերին դէմ բան մը գրած էի:

Կանչուեցաւ սրահի վարչութեան ատենապետ Ս. Ռստիկեան:

Փաստ—Ի՞նչ է անունդ և ի՞նչ կընես:

—Ռստիկ—Անունս Սարգիս է և դերձակ եմ:

—Դուն այդ սրահի պատասխանատունն ես:

—Այո:

—Այս մարդուն զարկին, նստարան վերցուցին:

—Ո՛չ, չզարկին, կուլ ալ չեղաւ: Վրճաբանութիւն մը տեղի ունեցաւ, ես բոլորն ալ դուրս ըրի և այսպէս վերջացաւ:

Բաղմամբիւ վկաններէն երեք հոգի ալ կանչուեցան որ նոյնը վկայեցին:

Դատաւորը լսածէն գոհ մնալով՝ բաւական է ըսաւ, իսկ Վառմեանին ըսաւ,—Ուրեմն գնա եւ ասկէջ վերջ ժողովուրդին զգացումներուն հակառակ յօդուածներ մի՛ գրէր: Այն երեք երիտասարդներուն վկանները շատ են որ կը վկայեն թէ ձեզ չեն զարկած, ես ալ զանոնք անպարտ կարձակեմ:

Դատարանին մէջ և թէ դուրսը Դաշնակցա-
կանք սկսան քննադատել դատաւորը և Միաց-
եալ Նահանգաց անխրաւ օրէնքը, և իրարու կը
փսիսային որ այս դատաւորը պաշտօնանկ ընե-
լու աշխատին (؟):

* * *

Բոժ. — Անխելք գլխուն ձեռքէն
Խեղճ ոտքերն ի՞նչ կը քաշեն:

Ծ Ի Ծ Ա Ղ

ՄԵԹՈՏԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանելու ալգոյ հասա-
րակութեան թէ թաղային ո եւ է ազդեցութիւն-
ներէ զերծ և մասնաւոր իմ շահուս համար վար-
ժարան մըն եմ բացած * * * Իզի թօղը պէլլի-
սիզ փողոց. նշացուցակը հովէն թռած տունը,
տեղւոյն նպատակայարմարութիւնը նկատի առ-
նելով:

Աշակերտաց ընդունելութեան և կամ վար-
ժարանիս վերաբերեալ ո ծ է խնդրոյ համար
ծնողք կամ պաշտպանք պարտին գիմել վարժա-
րանիս ընդհանուր տնօրէնին, որ ամեն օր առա-
ւօտէն մինչեւ իրիկուն վարժարանը չի գտնուիր:
Վարժարանս պիտի ունենայ երեք դասըն-
թացք. ամէն մէկուն չըջանը պիտի տեւէ չորս
տարի:

Ուսուցչական մարմին

Միւսիւ Անաստուածեան. — Կրօնագիտութիւն
և Աստուածաբանութիւն:

Միւսիւ Վասնդիւհան. — Հայերէն եւ ճաբօ-
ներէն:

Միւսիւ Խմպլովսքի. — Ֆրանսերէն եւ Անգ-
լերէն:

Միւսիւ Թաշթութմազեան. — Տնտեսագի-
տութիւն և Բարոյախօսութիւն:

Միւսիւ Առաւ. — Փախաւեան. — Առևտրական
օրէնագիտութիւն:

Միւսիւ Պոչկէզէնեան. — Երկրաչափութիւն,
Եռանկիւնաչափութիւն և Քառանկիւնաչափու-
թիւն:

Միւսիւ Պէյնամազեան. — Թուաբանութիւն և
Տօմարակալութիւն:

Մէտտահ Համբարձում. — Ընդհանուր ազգաց
Պատմութիւն:

Գաբտան Եանի. — Աշխարհագրութիւն:

Միւսիւ Քիւֆէչիլեան. — Առողջաբանու-
թիւն:

Թէնէքէճի Պօխոր. — Իրագիտութիւն և Բնա-
լուծութիւն:

Նագաշ Պէտիկ. — Գծագրութիւն և Գեղագ-
րութիւն իւր ճիւղերովը:

Ճամպազ Աստիկ. — Մարմնամարզ:

Պոյնիկճի Էրամ. — Ձայնագրութիւն:

Յուսալի ենք որ ծնողք ճանչնալով իրենց
առ զաւակունս ունեցած դաստիարակութեան
ծանրակշիռ պարտքերը, իրենց զաւակաց ու-
ղեղներնուն ծաւալները բազմացնելու համար
փութան ժամ առաջ օգտուիլ այս առիթէն, ու
ընդ ապագայ օգուտը կանխատեսելով, ձեռնար-
կեցինք սոյն ուղեղավերիչ գործին: Թող ծնողք
աներկբայ ըլլան թէ, ըստ որում մենք մեր շա-
հը կը սիրենք, բնական է որ աշակերտաց յե-
տագիտութիւնը աւելի պիտի սիրենք:

Հիմնադիր — Տնօրէն

Կ. Պոլիս

ՍԱՄԻԿ

Աղնուաշուք մը իր կնոջ հետ կը պոռար
ձիապանի մը:

— Ինչո՞ւ կը ձեծես կենդանին, մեղքը չէ՞:

— Վասն զի կին չունիմ, կը պատասխանէ
ձիապանը:

Բացօդեայ իրեղինավաճառ մը իր աշակեր-
տին ուղղելով խօսքը կըսէ:

— Ուշադրութիւն ըրէ սա մարդուն որ երեք
ժամէ աւելի է հոգ տնկուեր է:

— Արմատ բռնելու համար թերեւս, կը պա-
տասխանէ աշակերտը:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Պ Ա Լ Օ

(Տէվաւ վէ խիքաւ)

Կիւլգատ. — Բարիկուն պէ հօրքուր:

— Ապու Ալլահ էյլիինի վէրսին, սէ՛նմիսին մօ-
րու, եիւզիւնիւ նէ՛ աշտըն ետ:

— Նէ՛ եաբայըմ պէ հօրքուր, պագսանա հէր-
քէստէ աչըլըեօր:

—Աչըսընար պագալըմ, աչըսընար քի թա-
նըսընար:

—Եալընը շու ալճը իլէ պիր տէ չիչէքճի
մասկալարընը աչմայօրլար տա՝ հէր քէսի մէ-
րագտա պըրաըյօրլար:

—Իլլէ ալճընըն էօթէքինէ պէրիքինէ քէնտի
թապիյաթլարընա կէօրէ վէրմիշ օլտուղու չիմ-
տիքլի պիլէթլէրտէն հէր քէս մէրագտա գալլիպ,
քիմ օլտուղլարընը աղնամագ իսթէյօր:

—Ահ, հիչիճիք տէ մէրագ իթմէյիվէրիթի-
միչիմ, իսթէտիքլէրի գատար սագլասընար, եա-
րըն եինէ իչիթիր աննարըզ. պագընըզ, օ պիր
մասկալըլարտա եիւզլէրինի աչմայօրլար տը ա-
մա՝ վագըթ կէչտի իսէ՝ կէվչէյիպ աչըսընար:

—Պէլքի պուսընար քիմ օլտուղլարընը աննաթ-
մաղլար:

—Գուրնագսալար՝ էօյլէ եաբարլարտա, հէր
քէսի սէնէսինէ գատար մէրագտա պրաըլար:
թէ տատը օ վագըթ չըգաճագ տըր: Ամա կէվ-
չէք տավրանըպ եարըն պէլլի օլուրլարսա...

—Օ տէյիլամա, տահա կիթմէյէճէիզ մի մօրու:

—Կալիպա պիր հօրա տահա գալտը:

—Գավալիէնին քիմ իտի եա գըլ:

—Թէ օ կազկրլսաֆ, պիր շէյտէն հապէրի օլ-
սա ճանըմ եանմաղ:

—Նէյէ՝ օնունլա կէլտին մօրու:

—Նէ՝ եաբայըմ, Արթինճիյիմ պու հաֆթա
իչլէմէտի, հաշլագ գալտը տա...

Պաւ արպ սօն հօրա հավասը չալընմաղա
պաշլատը:

—Պէ Հօրքուր. հօրա օյնայաճաղըզ, գալգըպ
սէնտէ պիղիմիէ օյնասանա՝

—Ա... տէլիմիսին մօրու. էօյլէ շէյ օլուր
մու:

—Նիչի՞ն օլմուզ, բարեկենդան տէյիլ մի. տէր-
լէր քի վէրուսաղէմտէ վարգապետլէր պիլէ բար-
կենդանտա չալլարսըզ օյնարլարմըշ, Հէմ պագ-
ոանա, պիղիմ էսկի գրալլարմըզ պուրտա կէլ-
միշ հօրա օյնաեօրլար, սէն օնլարըն եանընտա
15 եաշընտա պիր գըզ կիպի սին. գալգըպ օյ-
նասան աշըպ մը տըր:

—Էյի ամո օնլար մասկալը տըրլար:

Կիւլգատ. —Տուր պէ հօրքուր, պէն չօգ օյնա-
տըմ. մասկամը սանա վէրիթիմ, գալգ սէն օյնա.
պու տա պէօյլէ պիր կիւն տիր, աագային պալօ-
սունտա սէն տէ օյնամըշ օլուրսուն:

—Հէ, հէ, բէք իսլահ օլուր, աֆէրին Կիւլգատ,
էյի տիւչիւնտին. հայտէ հօրքուր ապլա գալգ:

Հօրքուր ապլա իշպու թէքլիֆի պիլգապուլ,
քիմսէ կէօրմէմէք իչիւն պիր քէօչէյէ չէքիլիպ

մատմաղէլին մասքէսինի թագըպ վէ ըսգօչէզ
ֆութասընը պաղլայըպ հօրայա իշթիրաք էյլէ-
տի իսէ տէ, պիր արա՝ գալագ աղաճը կիպի ի-
քի թարաֆա սալանմագտա պուլունան կազկրլ-
սաֆ՝ մէրգումէյէ բէք չօգ եագըն կէլտիլինտէն,
«աման Ասվա:սղին չիմտի իսթիւմէ եըզըլաճագ»
տէյիպ հօրայը պրագտը պիր թարաֆա չէքիլտի:

Սաաթ ալթըտա պալօյա խիթամ վէրիլտի:

—Հօրքուր ապլա մօրու, պիր կիւնիւն պէյ-
լիյի պէլլէքտիր տէրլէր, կէլ շու ֆայթօնա պի-
նէլիմ տէ էվէ էօյլէ կիտէլիմ քի գօնու գօնշու
պիր շէյ կէօրսիւնլէր:

—Ա, եօգ, եօգ, էօյլէ շէյ իսթէմէզ, վարա-
նըզա եաղըզ տէյիլ մի. պիղտէն չօգ զիյատէ
վագթը օլանլար՝ տա:մալարընը գօլթուղլարընա
ալմըշ կիւզէլէ կիտէյօրլար, պիղ նի՞չիւն արա-
պայա բինէճէիզ. ար եըլը տէյիլ, քեար եըլը
տըր:

—Բէք իսլահ, էօյլէ օլսուն:

—Հէմ պագսանըզա, խորհուրդ աղալարը պի-
լէ արապայա բինմէտիքտէն մա՝տա, սանտըզա
զարար օլմասըն տէյիլէք, պիւֆէտէն արթան
5—10 օգգա պասթօն էքմէքլէրինի գօլթուղ-
լարընըն ալթընա ալմըշ կիտէյօրլար:

ՄԱՍԻԷ

Բոժ. —Պէշ օն օգգա էքմէք իչիւն կէօսթէ-
րիլէն պու տէրէճէ տըզգաթ վէ իգօնօմիա՝ եաղըն
կէվչէք տավրանըպ տա՝ պիւթիւն գըշ մէքթէպ-
լէրիմիզէ օ գատար ֆաղա ֆիյաթլա ալընտն օ-
տուն սայէսինտէ սանտըզա տօգունան զարարա
գարշըլըզ թուլթուլըր մը...

Պագգալլարըն գատապլարըն էքսիք վէրմէ-
սինտէն եիւրէյի եանմըշ օլան պիր շախս՝ պիր
կիւն պէլէտիյէ մէմուրլարընտան պիրիսինէ սի-
ւալ իտէր քի:

—Կօսըօտին, նիչի՞ն պագգալլարըն գատապ-
լարըն թէրաղիլէրինէ՝ պագըպ աեար իթմէզ-
սինիզ:

—Պիզ պագալ իլէ գատապլարը սըզըշտըր-
սագ՝ գուրա վագթը պիղիմ բարթիաեա գօնթ-
րա կիտէրլէր, պիղիմ մէսլէքիմիզ՝ էքսիք վէ-
րէնի տրամագ տէյիլ՝ էքսէրիյէթի գաղանմագ
տըր:

Թ.

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (8)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՈՐԻ ԳԵՏԸ

(ՊԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԸ)



— Շատ ողէկ, սա նամակը գեղանի Լիու-Սիուին յանձնելը վրադ առ, և պիտի կրնաս վստահ ըլլալ իմ երախտագիտութեանս վրայ:

Իր հոգակաւոր սիրագիրը մանկամարդ աղջկան կը կտրկառէր, բայց սա բայլ մը ետ ընկրկեցաւ սոսկման շարժումով մը:

— Չե՞ս ուզեր, հարցուց Չու անոր մօտիկնալով: Նշանուած էր արդեօք:

— Ոչ, թոթովեց Վարդ, բայց այդ պահանջածդ շատ ծանր բան է:

— Բայց կարգուի՞լ կուզեմ հետը: Հարուստ եմ. ասկից զատ, ապահով եմ որ անհաճոյ չեմ երեւիր անոր: Արդէն մէկ քանի օրէ ի վեր ակնարկներ կը փոխանակենք:

Գիտենք թէ կը ստէր Չու, բայց կուզէր բոլորովին յաջողիլ:

— Ա՛հ, ատ ուրիշ բան ուրեմն, ըսաւ Մէ-Քուի բըքիջ մը խղիւղով և մարելով իր հեգնոտ ակնարկը: Լա՛ւ, ինծի յանձնեցէք նամակնիդ օրիորդ Լիուին պիտի տամ:

Եւ նամակն յափշտակելով Չուի ձեռքէն, ծոցը խոթեց:

— Ե՛րբ:

— Կարելի եղածին չափ շուտ, բայց համբերող ըլլալու է: Կը հասկնաք թէ այս նամակը մէկէնիմէկ չեմ կրնար օրիորդին տալ, նախ պէտք է որ ձեր վրայ բիշ մը խօսիմ հետը:

— Այո, շիտակ է: Վերջապէս լաւագոյն կերպով վարուէ և ջանա՛ պատասխան մը առնել անկից:

Այս ըսելէն ետք հարկ եղաւ լռել, վասն զի մէկ քանի հոգիներ խանութ մտած էին և Չուն պարտաւոր էր ծառայել անոնց:

Վարդ օգտուելով խոյս տուաւ. բայց յաջորդ եւ միւս օրերը միշտ եկաւ Չուի խանութը: Մինակ, կամ դիպուածով, կամ որովհետեւ խորամանկ աղջիկը այնպէս կուզէր, միշտ այն վայրկենին կը հասնէր ուր մարդ կար խանութը: Խեղճ մտավաճառն ի զուր կը փորձէր վար դնել զայն, աղախինը մատը բերնին վրայ դնելով

միայն կը պատասխանէր, և գնումները կատարելէ ետք, խոյս կուտար անողորմաբար:

Իրերն այսպէս տեւեցին շաբաթ մը, և մեր դիւցազնը, ինչ ընելիքը չգիտնալով, կը սկսէր գլուխը կորսնցունել, վասն զի իր սէրը կաճէր իր անստուգուն թիւններուն պատճառաւ, երբ վերջապէս օր մը տեղի տալով անոր պաղատագին ակնարկներուն, Մէ-Քուի ամենէն ետքը մնաց խանութին մէջ:

— Լաւ ուրեմն, հարցուց աշխուժով, նամակս տուի՞ր:

— Այո, ըսաւ Վարդ. բայց հաւատացէք որ շատ նեղութիւն բաշեցի:

Չու հասկցաւ և իր հաշուասեղանը վարեց, ափ մը ստակ առնելու և մանկամարդ աղջկան ձեռքը դնելու համար, ըսելով.

— Ի՛նչ պատասխանեց տիրուհիդ:

— Նախ և առաջ բարկացաւ և ետ տուաւ ձեր նամակը, սպառնալով ինձ ամեն բան պատմել իր մօրը. բայց աղաչեցի որ այդ բանը չընէ. ըսի թէ չափէն աւելի կը սիրէր ձեզի, թէ հարուստ էիք, վեհանձն, եւ թէ կուզէիք հետն ամուսնանալ:

— Ա՛յն ատեն, մըմնջեց Չու, որուն աչքերը ըզձափաւ կը շողային և զոր յուզումը կը դողացնէր:

— Այն ատեն օրիորդ Լիու կարգաց ձեր նամակը, շիկնեցաւ և պատուհանին մօտեցաւ, անշուշտ ձեզ բըննելու համար վանդակին ետեւէն: Յետոյ բովս դարձաւ, ետ տուաւ ձեր սիրային յայտարարութիւնը, որպէս զի մայրը չկրնայ գտնել զայն, եւ բազումներու մէջ նետուեցաւ:

— Յետոյ, փոքրիկ Վարդս, յե՛տայ:

— Յետոյ, բայց այսչափ: Ասիկա երկու օր առաջ տեղի կունենար: Անկից ի վեր ձեր վրայ խօսք չեղաւ: Տիկին Լիու գրեթէ միշտ աղջկանը բռնէ է: Միայն դիպուածով կրցայ բովը գտնուիլ:

— Պիտի պատասխանէ՞ ինծի:

— Ա՛հ, ատիկա չեմ գիտեր: Սա գիտեմ որ հիմակ շատ անգամ կը պահուրտի իր ծաղիկներուն ետին:

— Իրա՛ւ, Ուրեմն կրնամ ամուսնութեան խնդրել զայն:

— Ի՛նչ շուտ առաջ կերթաք. մի՛ ընէք այդ բանը, ամեն բան կը կոսնցունէք: Չեղի ըսի թէ համբերութիւն պէտք է: Եթէ չհամբերէք, կը թողում ձեզի:

— Օ՛հ, չպիտի ընես այդ բանը: Քանի որ այնպէս կուզես, չպիտի շարժիմ, բու խորհուրդներուդ պիտի հետեւիմ. բայց բու պաշտելի տիրուհիէդ գոնէ երկտող մը առ ինծի համար:

—Պիտի փորձեմ, թէ եւ կը տարակուսիմ յաջողեալուս. կը հասկնաք անշուշտ թէ բարեկիրթ օրիորդ մը չի կրնար օտարականի մը գրել:

—Այն օրը որ միայն երկու տող բերես ինծի տնոր կողմէ, դրացիիս, գոհարավաճառ Շիօի խանութէն ամենէն գեղեցիկ ապարանջանը պիտի առնեմ քեզի:

—Նայինք: Հիմակուհիմա ոչ խօսք ոչ շարժում: Բայց լռեցէ՛ք:

Արդարեւ Չուի մէկ բանի յաճախորդները ներս մտած էին: Իր դրացուհիին հետ խօսակցելու վրայ տեսնելով զայն, սկսան երկուքն ալ քաշկռտել:

Բայց մտավաճառն ա'լ չէր վերաւորուեր, կատակաստութիւններուն պատասխանեց իր սովորական խոշոր բրբիջով և ձեռքերը շփշփելով:

Գալով Վարդին, որուն առաքինութիւնը չէր խրաչէր այդքան քիչ բանի համար, սակայն և այնպէս տագնապած երեւցաւ և խոյս տուաւ շիկնելով:

Ի.

Ուր Չու ծանուցումս ուր կը կատարայ որ կը խեղաշեղէ զինքը

Սակայն օրերը իրարու կը յաջորդէին, և Չուի փորձերը քայլ մը առաջ չէին երթար:

Վարդ գրեթէ ամեն առտու կուգար, բայց նոյն բաները կրկնելու համար.

«Տիկին Լիու աղջկանը վրայ կը հսկէր. սա չէր ուզեր գործն յայտնի ընել. համբերութիւն պէտք էր, դեռ ժամանակը չէր եկած:»

Վերջապէս ուրիշ շատ մը նմանօրինակ բաներ կը տխրեցունէին զինքը:

Խեղճ մարդը ա'լ վայրկեան մը հանգիստ չունէր, զգալապէս կը նիհարնար, և որչափ ալ ճիգ ընէր հանդարտ երեւնալու համար, իր յաճախորդները, մանաւանդ յաճախորդուհիները, որոց համար այլեւս չունէր երբեմնի համակրանքը, կը սկսէին նշմարել անոր վրայ կատարուած փոփոխութիւնները:

Վաճառման պահուն մտացիր էր, եւ գործը լըմնցունելէ ետք, կը կծկուէր իր խանութին կիսըաց մէկ փեղկին ետեւը, ամբողջ ժամեր հոն մնալու համար, աչքերը չղատելով սիրեցելոյն պատուհանէն, սարսափով զայն դարձարող ծաղիկներուն ամենափոքր սօսաւիւնէն, ամեն վայրկեան երեւակայելով թէ աղջիկը պիտի երեւար այդ անշուշտօր շրջանակին մէջ իրեն ժպտելու

համար, գլուխը վեր առնելով վերջապէս սիրահարի մը նման որ ինքզինքը պաշտուած կը կարծէ:


Իր զննութիւնները նախ և առաջ շատ դժբախտ եղան, վասն զի, օրին մէկը, հրաշտ քիչ կը սպասէր, իրեն անծանօթ երիտասարդ մը տեսաւ որ տիկին Լիուի դուռը կը գարնէր, եւ երբ Վարդ բացաւ, սարսափով դիտեց որ բարեկամական ընդունելութիւն մը կ'ընէր անոր:

Յաջորդ օրը, երբ օտարականը երկրորդ անգամ ներկայացաւ, աղախինը նոյն փութկոտութեամբ ներս խոթեց զայն, եւ Չու զգաց որ նախանձն իր սիրտը կը կրծէր:

Իրեն համար, նորեկը փտանգաւոր թեկնածու մը միայն կրնար ըլլալ, բանի որ թոյլ կը տրուէր անոր մտնել այն տեղն որ փակուած էր իրեն:

Բայց Վարդ շուտով առաջին առաւ այդ երկիւղներուն: Հաւատեց զինքը թէ իրեն հակասակորդ կարծածը տիկին Լիուի մէկ եղբորորդին էր, որ բնաւ միտքէն չէր անցունէր անոր աղջկան հետ կարգուիլ, նախ վասն զի հարստութիւն չունէր, յետոյ, որովհետեւ կըրօնաւոր ըլլալու մտադիր էր Պուտայի մեհնանին մէջ, ուր արդէն աստաբաշխութեան ուսուցիչ էր:

(Շարունակելի)



Ուր կրնամ գտնել գէմքս.

Печатница „Ѣ заимность“ — Варна